3603
hmysliplic

12004

205 3603 1052 439 6. 47

ՄԵՂՐԻ

ՄԵԾԱՆԱԼՈՅՆ

ԵՒ

ՁՕՐԱՆԱԼՈՅՆ

ՀԱՄԱՐ:

Թարգմանութիւն:

Երիտասարդ տպագրութեան:

Ի ՄՈՍԿՈՎ:

Ի Տպագրատան Ճէմսպրանին Տէրոյ
Լաստրէանց:
1840.

241

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ, Москва 1839 года, Сентября 29 дня.

Цензоръ В. Флеровъ.

Гос. Публ. Библиотека СССР
ул. Ленина
5375
38

Երբ որ մեր փրկիչն ասումէր, թէ ինքն է նա որ ամէն մարդ ազատ է անում։ (Յոհ. Ը. 32. 33։) Հրէաներն տրտնջումէին նորանից։ Ինչու որ՝ կարծումէին թէ ծառայ չէին. և սրա համար նորանց ամբարտաւանութիւն շատ շարժվեցաւ և նեղացաւ Քրիստոսի ասելովն. թէ ծառայ էին։ Ա՛խ իրաւի որ ծառայ էին. և էսպէս էլ ամէն մեղաւոր մարդ ծառայ է, թէ և ինքն իսկի չիմանում. մինչև որ Քրիստոս ազատ անէ նորան։ Ա՛խ որքան երկար ժամանակ որ նա էս վիճակիս մէջ մնայ, էնքան էլ նորա կապանքներն պինտ և սաստիկ են լինում. և ինքն տկար և անկարող է դառնում որ շատ դժուար դուրս գայ և ազատութեանն հասնէ։ Մեղքն մին էնպէսի սաստիկ տէր և մեծաւոր է, որ իրան ծառաներին իսկի հանգիստ չի տալիս, բայց միշտ և անդադար վազ անելով տանում նորանց մին բանից մէկէլ բանի մէջ, և էնքան երկարացնում իրան իշխանութիւնը մինչև որ՝ մարդոյն

մահի մէջ հասցնէ։ Մեղքի ճանապարհն էն-
պէսի ճանապարհ է, որ նորանում անկա-
րելի է հանդիստ կանգնել՝ դադարել և
միտք անել. ինչպէս որ մին մարդ որ մին
բարձր սարից դէպի ցած կողմն է գնում.
իսկի չի կարող դատարել՝ բայց ամէն մէկ
քայլով (шаг) առելի շուտ առաջ է
վազում. մինչև որ սարի ցած կողմն հաս-
նի։ Հենց էս մտքովս սրբ առաքեալն գրու-
մէ թէ դուք ծառայ էիք անօրէնութեանն՝
անօրէնութիւն գործելոյ համար։

Անօրէնութեան ծառայ լինելն անդարձ
և անպէղջ մեղաւորի ճշմարիտ և յատուկ վի-
ճակն է։ Ուղղդ է որ ամէնքն հենց մին
կերպ մեղքի չեն ծառայում։ Մինն կայ որ
երան անձն մատնում հարբեցողութեան,
մէկէն պղծութեանն, մէկէն նախանձու, մէ-
կէն արծաթասիրութեանն, և կամ ու-
րիշ դարշելի մեղքերին. բայց էս ամէնս մէ-
նակ մեղքի իշխանութեան զանազան կերպա-
րանք են, որ մարդկանց կերպ կերպ բնու-
թիւններին տէս հնարված և կարդված են։
Բայց հենց էն ամէնքն էլ ծառայ են անօ-

ըէնութեան, և ամէնքն որ մեղքին ծառայելուց չէն դադարում, օրէցօր բռնադատվումեն որ իրանց գործոյ մէջն առաջանան. իբր անօրէնութեան ծառայք անօրէնութի գործելոյ համար: Մեղքի էս առաջանալն և զբռնանալն մենք հիմիկ առելի յայտնի ցոյց կըտանք էս հետևօղ խօսքերովս:

Ե.

Ամէն ոք որ իրան անձըն ծառայ է մատնում մեղքին ինչ կերպով որ լինի, նա ընդունում է էն կանոնըն և խորհուրդըն՝ որ ամէն մեղքի համար Ճանապարհ է պատրաստում: Այս կանոնս և խորհուրդս էն է՝ որ պէտք չէ Աստուծոյ օրէնքին և կամքին մոռնալ անել, ինչ ժամանակ՝ որ նա մեր ցանկութիւններին հակառակ է կենում: Եթէ դուք էս կանոնըս ընդունիք, ապա խոսի մին բան չըկայ որ կարենոյ խանգարել և յետ քաշել ձեզ էն չար բաներից՝ որ ձեր սիրտն ցանկանում նոքանց: Կարելի է որ դուք ամէն չար և զէշ գործք չը կատարէք, բայց եթէ ձեր հոգին էնպէսի մոռածմունք և խոր-

հուրդ ունի, ապա ոչ թէ աստուծոյ վախն, բայց միմնակ մարդկանց երեսպաշտութիւնն կամ ձեր շահի և կամ ձեր փառքի սէրն խափանումէ ձեզ. որ չար գործ չըկատարէք: Օրինակ ասեմ: Եթէ դուք մին անգամ ձեր անձներիդ թոյլ տաք որ դողութիւն անէք, ապա հեշտ կըլլայի որ էն անհոգութենովն շնութիւն, յափշտակութիւն կամ սպանութիւն էլ գործէք, եթէ նորանցով փորձվիք և յոյս ունենաք՝ որ պատժից փախչէք: Հենց էսպէս է լինում որ նա որ աստուծոյ մին պատուիրանքըն քանդումէ. էլ ամէն պատուիրանքներըն է քանդում. պատճառն որ՝ հենց էն աստուածն, որ մին մեղք խափանումէ, հենց ամէնըն էլ խափանումէ. և նա որ յոժար կամքը հենց մին բանի մէջ նորա դէմ մեղանչումէ, նորա իշխանութիւնըն և օրէնքն հենց էնպէս դէն է քցում. ինչպէս որ նա՝ որ շատ անգամ ամէն բանի մէջ անհնազանդ է:

Էլ եթէ աստուծոյ վախն մեր անձներըս չըքունէ և կառավարէ, ապա մարդկանց վերայ մտիկ տալն լսկի բաւական չէ որ մեզ

մեղք գործելուցն յետ քաշէ։ Պատճառն որ՝ առաջ շատ անգամ և շատ կերպով կըլլնի որ ծածուկ մեղք գործենք, բայց ծածուկ գործած մեղքն շուտով պիտի դուրս գայ և յայտնի խայտառակութիւն դառնայ. ինչու որ՝ մարդն իրան ամէն հնարքներովն և աշխատանքներովն չի կարող որ իրան հոգոյ յատուկ բնութիւնն և տիրապետող ցանկութիւնըն երկար ժամանակ ծածկէ։ Երբ որ Սաւուղ թագաւորն մին անգամ Աստուծոյ օրէնքն դէն քցեց նորանով որ Ամաղէկացոց ազգըն Աստուծոյ կամքին պէս չըպատժեց՝ ասա նորա միտքն ամէն կերպ չարութեան մէջ ընկաւ. նախանձով, ատելութենով և չար կամքով լըցված շատ անմեղ մարդկանց սպանեց. խորհուրդ առնելոյ համար կախարդ կնկան մօտ գնաց և վերջն ինքն իրան սպանելով իրան ոչըրմելի կեանքըն վերջացրուց։

Բ.

Ամէն մեղք որ կատարումենք, փչացնումէ մարդոյ էն զգուշաւոր կամքն. որ նորա-

նով կամենումէ մեղքին հակառակ կենալ, և էնպէսի անհոգութիւն է ծնում, որ ամէն յոյսն կտրումէ: Հոգոյ որքութիւն նման է մարմնաւոր յուսկութեանն որ յիսուսակ շարերով երևումէ. ինչու որ շարժումէ մարդոյն՝ որ ամէն բանից հեռանայ՝ որ կարենայ պղծել նրան միտքն կամ հոգին. բայց երբ որ մին անդամ՝ մեղքի ծառայութեան մէջ ընկնինք. էն ժամանակն էս զգուշութիւնս և ջանք անելն կորչումէ: Էն երեխան որ միշտ պատռուած և կեղտոտ շորեր է հագնում, իսկի ամօթ չունի և իսկի հոգս չի անում. որ նրան շորն յիսուսակ լինի:

Երբ որ մարդն առաջին անդամն մեղաց մէջն է ընկնում, էն ժամանակն նր խղճմտանքն շատ հակառակումէ և տանջումէ նորան: Այսպա կարելի է որ նա միտք անէ՝ թէ եռ իսկի մին ժամանակ մին էլ մեղք չեմ գործել, բայց երբ որ փորձութիւնն նորոգվումէ և մին էլ գալիս է և նորան հակառակ կենալոյ պատճառներն թուլացնումեն. սպա մարդն շատ հեշտ թալանի պէս փորձողի ձեռքն է ընկնում: Այսպա խղճմտանքի

ձայնն և յանդիմանութիւնն սուս է լինում, նորա սիրտն քարանում է և պնտանում։ Նա ասում է իրան մտքումն թէ յոյս չըկայ. ինչու որ՝ օտար ճանապարհ սիրեցի. սրա համար կըգնամ հիմիկ նորա վերայ։ Ոչն առաջին ներս պրծած փորձանքներն մէջն ասաց. թէ մինչև էստեղ կըգնամ, և էլ տեղի հեռու չեմ գնալ. բայց հիմիկ էն առէն խոստմունքներն ոչինչ են համարվում։

Պըտիկ ճանճն երբ որ բովն սարած տան մէջն ընկնի, իսկի մին բան կարող չէ անել իրան անձն փրկելոց համար. բայց նորա ամէն ջանքն միայն նորա թեթև թևերն էլ տելի կապում է և իրար խառնում և նա մին քանի ժամանակ հակառակելուց ետև իրան ազատութենիցն և իրան կեանքիցն զրկվում։

Գ.

Ամէն մեղք, որ կատարումենք, ոչ մէնակ հակառակ կենալոց զօրութիւնն է թուլացնում, բայց էլ տելի մին անկարգ ցանկութիւն է ծնում մեղանում, որ էն մեղքն մին

էլ գործենք և կատարենք։ Այս բանը կարող ենք զբաղել նմանայնել. պատճառն որ՝ երբ որ նորանց մին մնոն թշնամեաց մնան է անցնում, մենք բռնադատվումենք որ երկու տակ նեղութիւն քաշենք. առաջ նրա համար է, որ մենք ինքներս տկարանումենք. և երկրորդ. նրա համար որ թշնամիներն զբանումեն։ Ահա հենց էսպէս էլ մեզքն՝ որ մին անգամ կատարումենք՝ թուլայնումէ մեր հոգոյ զորութիւնը. և զբաղնումէ մեր մեղաւոր ցանկութիւնները. ինչպէս որ շատ յայտնի հաբեցողութեան, արծաթասիրութեան և անառակութեան և սրանց նման մեղքերի մէջն տեսնումենք։ Մեղքն առ հասարակ խաբումէ մեզ էն սուտ խոստմունքովն, որ եթէ մենք մին բանի համար նորա կամքն կատարենք՝ էլ աւելի բան չի ուզիլ մեզանից, կամ թէ հաւատացնումէ իրան խաբված ծառաներին թէ մեզքին հնազանդ լինելն կըթեթևացնէ ցանկութիւնների տանջանքը։ Ուշադրդ է որ էգ բանդ մին ժամանակ էդպէս լինի, բայց մեզքն չի ուշանալ, այլ երկու տակ զբաղու-

թենով յետ կդառնայ։ Որքան որ հնազանդ լինինք նորան, էնքան էլ աւելի սաստիկ հրաման է տալիս մեզ. և օրէցօր նոր բան է խնդրում մեզանից։ Դա որ մին անգամ կորուստի ճանապարհովն գնացել է, կարող է վերձառութենով ասել՝ թէ հազար տակ էլ աւելի դժուար է յետ դառնալ, քան թէ սկզբումն էս ճանապարհիս մէջ խակի չի մնալ։ Տղրկի (սու-ղո-հոկ) ծարաւութիւն արիւնի համար, կամ հարբեցող մարդոյն գինոյ համար. շատ տկար պատկեր է էն հոգոյ կրակով վառված ցանկութիւնեերին ելուայնելոյ համար, որ մեզայ ճանապարհումն և ծառայութենումն է կենում։

Դ.

Եթէ մենք մեր անձներիս թոյլ տանք որ հենց մէնակ մին մեղք գործենք, ապա շուտով կրբռնադատվինք որ ուրիշ մեղքերի մէջն էլ ընկնինք. էն առաջվան մեղքն ծածկելոյ և կամ թողութիւն ստանալոյ համար։ Այդ ճշմարտութիւնդ էնքան յայտնի է որ խակի ոչոք չէ լայն ցոյց տալ և

հաստատել նորան. թէ սուրբ գրքերն և թէ հենց մեր հաստատակ կենցաղավարութիւն սրա համար շատ օրինակներ մեր առաջիս է դնում։ Երբ որ մեղքն կատարվեցաւ. ապա առաջին բանն՝ որ մեղաւորի միտքն է գալիս էն է՝ որ ջանք անելով իրան մեղքն ծածկէ կամ թէ որ ծածկելն անկարելի է՝ որ պատճառներ հնարելով էն մեղքն ներելի շինէ։ Առաջին մարդ Ադամն մեղք գործելուց ետև ջանք արաւ որ ծառերի միջումն թաղ կենայ, բայց երբ որ չը կարողացաւ աստուծոյ երեսից ծածկվել, էն ժամանակն նա սկսեց մեղքի պատճառն էն կնկան վերայ դնել, որ աստուած տուաւ նորան՝ ասելով թէ նա ինձ փորձութեան մէջ քցեց։ Հենց էնպէս էլ Դաւիթ թագաւորն օրինակ է մեզ համար։ Երբ որ նա մեծ մեղք գործեց, առաջ հնարք ուզեց՝ որ էն իրան մեղքն ծածկէ. և երբ որ չը կարողացաւ ծածկել. մարդասպանութիւն գործեց։ Ահա հենց էսպէս էլ էս օր է լինում. նա որ մին մեղք է գործում, շուտով կը բռնադատվի որ էլ ուրիշ մեղքի մէջ ընկնի։

Ն.

Ամէն մէկ մեղք որ գործումենք՝ մեղաւոր սովորութիւն է ծնում մեզմնում, կամ եթէ էս սովորութիւնս հենց առաջ մեզմնում կար, հաստատումէ և զօրացնումէ նորան։ Նէթէ մենք մեր ամէն մէկ մեղաւոր գործքին ջոկ ջոկ մտիկ անենք, նորանք նմանվումեն ջրերի կաթիլներին՝ որ շատ քիչ զօրութիւն ունին, բայց երբոր նորանք սովորութիւն են դառնում, էն ժամանակն նմանվումեն շատ սաստիկ վարար գետի, որ նորան իսկի մին բան չի կարող դէմ կենալ։ Հարբեցող մարդն առաջուց յատուկ ծարաւութիւն չունի հարբեցնող խմելիքին համար. և կարելի է որ աշխարհական տրրտմութիւն կամ ունայն ընկերութեան սէրն առաջ շարժեցին նորան՝ որ թեթեւամիտ և խմող մարդկանց հետ նստի. բայց երբ որ խմիլն սովորութիւն է դառնում և նորատնում զօրանում է, ապա հարբեցողութեան խեղճալի ծառայ է լինում։ Թէ և նա տեսնումէ՝ որ օրէցօր իրան ապրանքըն փչացնումէ, կեանքըն կարճացնումէ և հոգին կոր-

ցնումէ. բայց չի կարող զինին կամ արա-
ղըն թողել՝ այլ օրէցօր աւելի ցանկանում
մէ նորան: Արծաթասէրն կամ ադահն ա-
ռաջուց փողին և ապրանքին անչափ ցան-
կութենով չի հեռանում. բայց երբ որ մին
անգամ սկսեց իրան անձին արծաթի սի-
րոյն մատնել՝ խսկսաւ նորա ծառայ է դառ-
նում. և ամէն չար հնարք գործ է ածում.
որ մէնակ փող հաւաքէ: Նա խաբում է և
սուտ երդում է ուտում և աղքատներին
զրկում՝ մէնակ նրա համար որ փող ստա-
նայ: Գիշեր և ցերեկ հոգս է անում՝ որ ինչ
կերպով որ լինի, իրան ապրանքի ցանկու-
թիւնըն լցնէ. և սրա համար իսկի հան-
գիստ չի գտնում. եթէ մին բան կորցնէ՝
մին անհնարին տրտմութիւն բռնում նո-
րան՝ և նորա ողորմելի կեանքըն կարճա-
ցնում և շատ անգամ էլ վերջացնում: Կա-
րելի է որ ամէն մէկ անառակ ալիսծ և պոռ-
նիկ մարդն՝ առաջուց պարկեշտ մարդ էլած
լինի: Նորա անառակութեան և սղծու-
թեան սկիզբն մէնակ էն էլաւ. որ թեթև-
ամտութենով և անհոգ բարեկամութե-

նով մին կնկան հետ վարվեցաւ։ Բայց երբ որ նա պարկեշտութեան և սրբութեան սահմանին մին անգամ դուրս եկաւ, ապա իրան ցանկութիւններին իսկի սահման չի դնում։ Նորա աչքերն լիքն են պոռնկութեամով. և չի կարող մեղքից դադարել։

Զ.

Երբ որ մեղաւորն էնպէս մեղաց ճանապարհումն յամարված և թմրած է, ապա իրան բնական սովորութենից զոկ ուրիշ կապանքներով և բաներով էլ պատվում. որ նորան էլ աւելի մեղքի մէջ թողումն, և վերջն խապար կորուստի մէջ կընքցին, թէ որ աստուած իրան անսահման ողորմութեանովն չը փրկէ նորան։ Դա իրան նման մարդկանց հետ կապակցութիւն և ընկերութիւն արաւ. և հիմիկ նորա օգուտն և շահն խընդրումն որ նորանց հետ միաբանված մնայ։ Ապա ինչպէս պիտի աղատվի էս ծանր լծից. նորա ընկերներն կըսատանն և կըպատժեն նորան. և աշխարհքն կըծիծաղէ նորանով։

Շատերն կան որ էսպէսի ողորմելի վիճա-

ի մէջն՝ երանց խղճմտանքովն շատ շարժ-
վեցան. և շատ արտասունք թափեցին, և ան-
կեղծ խոստովանութենով ջերմեռանդ ցան-
կութիւն ցոյց տուին՝ որ իրանց չար ճանա-
պարհին հեռանան և յետ դառնան, բայց
երբ որ սկսեցին յետ դառնալ, շատ մեծ
մեծ արգելմունք և խափանմունք գտին. ո-
րովհետև մին անգամ սկսեցին մեղքին ծա-
ռայել և նորա մէջ թաղվիլ՝ ասա հիմիկ
չեն կարում նորանից հեռանալ և յետ քաշ-
վիլ թէ և իմանումեն՝ որ իրանց վերջն ան-
պատմելի չար և ողբմելի պիտի լինի։ Ո՛վ
կարդացող մի՞ թէ դու էլ էսպէսի վիճակի
մէջ ես։

Դերիր և թոյլ տուր ինձ, քո բարեկա-
մին՝ որ յայտնի և համարձակ խօսիմ քեզ
հետ։ Հաստատ իմաց որ առանց տարակու-
սանաց պէտք է քեզ, որ կամ յետ դառ-
նաս կամ յաւիտեան դժոխքի մէջ կորչիս,
և էդ էլ շատ շուտով պիտի լինի։ Կըլինի
որ անհաւատնելն ասեն քեզ, թէ ահ չը-
կայ, բայց մեռնելոց ժամանակն հենց նորանք
առ հասարակ յայտնի ցոյց են տալիս, թէ

հենց երանք չը հաստատային էն բաներին, որ ասային կամ գրեային։ Ճշմարիտն ասումեմ քեզ՝ թէ աստուած կայ՝ որ ամէն մարդկանց դատումէ. և քիչ ժամանակից ետև հենց դու էլ սէտք է երևիս նորա առաջին՝ որ պատասխան տաս։ Ապա կամենումես հենց դու ինքդ քո անձըն էն կրակի մէջ քցել. որ իսկի չի անցնիլ և որ նորանից ոչ ոք յաւիտեան չի փրկվիլ։ Էն ահաւոր պատիժն յատուկ սատանայի և նորա հրեշտակներին համար է պատրաստված. ապա եթէ դու էլ գնաս էն տեղ՝ ճշմարտութենով սիտի ասվի. թէ դու ուժով էս ընտում էն խաւարի աքքայութիւնը։

Բայց բաւական չէ որ յետ դառնաս, բայց հենց աստուծոյ մօտ սէտք է դառնաս։ Պատճառն որ՝ Տէրն ասումէ, թէ որ յետ դառնաք, ինձ մօտ յետ դարձէք։ (Երէմ. գ. 1։) Եթէ ես քո հիմիկվան օգուտը մէնակ կը-կամենայի հաստատել, ապա ես խորհուրդ կըտայի քեզ, որ մէնակ յայտնի մեղքերը թողես, և արթուն և զգոյշ կանէի քեզ, որ վախչես էն չարիքներից՝ որ մեղքի ձե-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ

ռոճն քեզ վերայ կըգան։ Ընտասունքներն թէ և միտք չունին, բայց բնական շարժմունքով փախչումեն էն բաներէն, որ կորուստ են բերում երանց վերայ. ինչպէս որ թռչունն զուր տեղն քցվում եթէ թռչունն տեսնէ։ Ծովի ձկներն յետ են քաշվում ջրերի շատ խոր և սաստիկ պտուտիցն։ Այս մարդն բանական խելքով և բայց աչքով կըմտնէ էն թալակին մէջ, որ երան համար սարած է. և անհոգ կըգնայ կորուստի անդունդի մէջն։ Բայց իմ ջանքս և կամքս մինակ էն չէ, որ մինակ էս հիմի կվան վտանգներէն և ահէն զգուշացնեմ քեզ, բայց իմ կամքս և աղօթքս էլ աւելի էն է՝ որ փրկվիս մեր տէր աստուծոյ էն բարկութենէն, որ պիտի գայ։ Սրա համար խնայէք, էն որ ասումեմ քեզ։ Թէ և էս աշխարհքիս մեծ և յայտնի մեղքերէն հեռանաս. բայց էնպէս էլ կարելի է՝ որ քո մեղայ մէջ մնաս և յաւիտենական կորուստի մէջ ընկնիս։ Քո վտանգդ և ահդ մինակ յայտնի մեղքերէն չի գալիս։ Կարելի է որդի և յայտնի մեղքերն մանկ տալով՝ սատանան դուրս հանվի, բայց

նա ներսումն կծածկվի և ամբարտաւան անձ-
նասիրութեան բերդի մէջն կընտի: Ա-
թէ դրսի կեղտոտութիւնն է էն՝ որ տա-
նամէ քեզ կորուստի մէջն, բայց ներսի հի-
ւանդութիւնն, որ ամէն չարիք նորանից են
դուրս գալիս: Ինչու որ ներսից մարդկանց
սրտից չար խորհուրդներ են դուրս գալիս,
շնութիւններ, պոռնկութիւններ, գողու-
թիւններ, սպանութիւններ, ագահութիւն-
ներ, չարութիւններ, նենգութիւններ, պիղծ
ցանկութիւններ, նախանձութիւն, հայհոյ-
ութիւն, ամբարտաւանութիւն, անզգա-
մութիւն: (Մարկ. Է. 21. 22:) Ամէն յայտ-
նի մեղք որ կեանքի մէջ գործքով կամ խօս-
քով տեսնվումէ՝ քո սրտի ներսի ցանկու-
թեան համար վկայումէ: Ա՛թէ էս ապա-
կանված աղբիւրն չի սրբվի, ապա զուր տեղն
ջանք կանես, որ նորանից բղխած գետերը
սրբես: Լա՛ւ է որ մեղք գործելուցն դադա-
րես, միայն թէ արդարութենով դադարես
նորանից: Սրա համար մէնակ մին ճար կայ.
էն որ մեր փրկիչն ցոյց է տալիս՝ մեզ ասե-
լով, թէ ապաշխարեցէք և աւետարանին

հաւատացէք: (Մարկ. ԺԶ. 15:) Ուստի ա-
պաշխարութեան և հաւատքի ամէն որ ա-
նես օգուտ չի բերիլ, բայց եթէ դու քո
անձին մեղաւոր և անպիտան համարելով
կարենաս ամէն ուրիշ յոյսը թողել, և
միայն Քրիստոսին բոլոր սրտով հաւատալ,
ասա առանց տարակուսանքի կըփրկվիս: Ին-
չու որ՝ նորա արիւնն մեղաւորներին համար
թափվեցաւ. և հենց մեղաւորներին գլխաւորի
համար էլ թափվեցաւ: Նորա հնազանդու-
թիւնն մինչև՝ մահ աստուծոյ առաջին էն-
քան հաճոյ և ընդունելի էլաւ, մինչև որ
ամէն մեղաւոր, թէ և նորա կեանքն ամէ-
նից մեղաւոր և անարժան էլած լինի, Յի-
սուսի համար ընդունելի լինի աստուծոյ ա-
ռաջին, թէ որ նորա մօտ դայ Յիսուսի ա-
նունովն և նորան աղաչէ Յիսուսի արդարու-
թենովն և արդիւնքովն: Աստուծոյ յաւի-
տենական որդին ոչ մէնակ քեզ նման մարդ-
կանց համար հնազանդ էլաւ և մեռաւ. բայց
դ՝ էլ հիմիկ աստուծոյ աջ կողմն է նըստում՝,
որ նորանց համար մարդ էլաւ, երկրի վե-
րայ մանեկաւ և մեռաւ: Նրա համար էլ

կարող է բոլորովին կենդանի անել էն ա-
մէնին, որ նորանով մտանումեն աստուծոյ
մտ. ինչու որ՝ միշտ կենդանի է որ նորանց
համար բարեխօսութիւն անէ: (Ա.Բ. Է. 25:)

Ո՛վ կարդացող, եթէ դու կարօղանաս
էս վարդապետութիւս ընդունել, դա կըբը-
ժշկէ քո ցաւըդ և հիւանդութիւնըդ: Ա՛նտա-
ռակոյս փրկութիւն պատրաստէ քեզ հա-
մար, թէ որ դու կարօղանաս պարզ մըտ-
քով և բոլոր սրտով նորան ընդունել, էբը
աստուծոյ ողորմութեան և շնորհաց պար-
գև, որ մէնակ Յիսուսի Քրիստոսի քաւու-
թենովն պատրաստվեցաւ քեզ համար: Ա-
թէ կարօղանաս քո մեղքերըն էս մեծ պա-
տարագիս վերայ խոստովանիլ, ապա աստ-
ուած հաւատարիմ և արդար է, որ քո մեղ-
քերըն թողէ քեզ, և քեզ ամէն անիրա-
ւութիւններից սրբէ: Ա՛ստուած ոչ քո զըզ-
ջանալոյն, ոչ քո աղօթքին և ոչ քո ար-
տասուքին չի նայիլ, որ նորանց համար
քեզ թողութիւն և փրկութիւն տայ. բայց
մի միայն էն է ընդունում և էն բանին է
նայում. որ նորա որդին կատարեց և քեզ

համար քաշեց։ Այս է թէ քո յոյսըդ ոչ քո աղօթքին և ոչ քո ողորմութեան վերայ չըդնես, բայց միայն Յիսուսի վերայ, որ փրկեց քեզ, և հենց նորա անունին դաս. որ ողորմութիւն խնդրես, ասա յաւիտենական կեանքըն պատրաստ է քեզ համար։ Ա՛խ որ ժամանակ որ էս վարդասպետութիւնս քո խռովված հոգոյդ հանգիստ տայ՝ հենց էն ժամանակն էլ քո սիրտդ էնպէս կըսրբէ, որ քո առաջվան ամէն ճանապարհներն ատելի և դարշելի երևին քեզ, և պարկեշտութիւնն և արդարութիւն և աստուածպաշտութիւնն քո հոգոյ ուրախութիւն լինին։ Բայց թէ որ քո սիրտդ դեռ մեղքով քարացած մնայ, թէ որ Յիսուս Քրիստոսն և նորա էն փրկութիւնն՝ որ իրան արդիւնքին պատրաստված է և ողորմութեանով տվվում քեզ, իսկի քեզ համար ուրախութիւն և մխիթարութիւն չէն, բայց էլ ատելի քո մտքիդ ներհակ են երևում, ապա իմաց, որ էլ ուրիշ անուն չըկայ, երկնքի ներքևն մարդկանց տըվված, որ նորանով կարելի լինի քեզ ապրել. բայց միայն Յի-

սուսի Քրիստոսի անունն. և ապա մեռնելոյ սահմանումն քանի՛ տրտում կըլլինի քո հոգիդ, երբ որ դու միտքըդ կըբերես, որ քո կեանքի մէջն մին անգամ փրկութի՛ տուօղ ճշմարտութիւնըն լսեցիր՝ և ընդունելոյ տեղակ անարգեցիր։

Արանելի են էն ամէնքն, որ Յսի Քսի անուանովն յետ են դառնում նը՛ և իրանց հօր մօտն, նը՛ և իրանց աստուծոյ մօտն. և ապա իրանց մեղքերիցն սրբվումեն, և սրբութի՛ պտուղ են բերում։ Նորանք էլ կառաջանան ճըշմարտութենով, և բարեպաշտ գործքերով։ Արդարն պիտի կըբռնէ իրան ճանապարհըն, և նա որ սուրբ է ձեռքով, սիրտ կառնէ։ (Յովհ. ԺԷ. 9։) Աստուծոյ ծառայութիւն նորա համար օրէցօր հեշտ կըլլինի. ճշմարտութիւնն էլ աւելի պարզ կերևի նորա առաջին. նորա հետ դառնալոյ հաստատութիւն կըզօրանայ, նը՛ աստուածպաշտութիւն և սրբութիւնն օրէցօր աւելի արմատ (ՀԻՄՔ) կըքցէ. իրան հաստատ լինելոյ յոյսն կընտրոգէ նորա զօրութիւն. և թէ նեղութի՛ և թէ ուրախութի՛, թէ առանձին լինելն և թէ

024

ընկերութեան մէջ լինելն, թէ աստուծոյ սաստիկ խրատն և թէ նորա շնորհայ քաղցրութիւնն, ամէնն առ հասարակ օգնական կըլլինի նորան՝ որ օրէցօր առելի պատրաստ և արժանի լինի սրբոց ժառանգութեանն լուսոյ մէջն էն նոր դալու աշխարհքու�ն.

Ամէն:

Վ. ԱԽՃԱՆ:

ՀԱՅ-ՍՍՌ Ա. Մելիքյանի անվ. Գրադարան